

թից նկատմամբ, երբ լուսարգելը բոցոյն մօտեցընելով՝ տենեկի մը մէջ տարածուած ճառագայթները կը խափանենք, որով կը միջնանայ. իսկ երբ հեռացընենք լուսարգելը՝ ճառագայթները անուղղակի կերպով կը լուսաւորեն նաեւ լուսարգելէն անթափանցիկ միւս ցած մասը :

Է

Արդեօք վտանգ կայ որ Մարկոնիի Ռեւոպիւնսերը գողացուին օդին մէջէն՝ իրենց ընծացքին ժամանակ :

Եղան ոմանք որ բսին թէ դժուարութիւն չկայ որ Մարկոնիի հեռագիրները կարենան գողացուիլ այն անձերէն՝ որ ուզեն ընդունելու համար սահմանուած գործիքին նման գործիք մը հաստատել, որոյ վրան ալ հաստատապէս ազդեցութիւն պիտի բնեն ուղարկող կայարանէն հասած էլեկտրական կամ էթերային ալիքները : — Այս գիտողութիւնս իրեն սկզբունք՝ ուղիղ է և ճշմարիտ. բայց այս պարագայէն յառաջ եկած անպատեհութեան պարմանը կայ. վասն զի Հէրցեան ալիքներն ալ՝ նման ձայնական ալիքներու՝ իրենց անփական յատկութիւն մ'ունին : Եթէ բաց դաշնամուրի մօտ՝ ձայնորդ մը (diapason) թրթռացընենք՝ որ որոշեալ աստիճան մի ձայնի յառաջ բերէ, կը տեսնենք կամ կը լսենք որ մի և նոյն ժամանակ կը թրթռան միայն իրեն համաձայն եղող լաբերը, իսկ միւսները լուռ կը մնան. նոյնը կը հանդիպի նաեւ ելեկտրական ալեքայնկաւ մամբ : Եթէ ուղարկող գործիք մը կարող է որոշեալ չափով երկայնութեան և յաճախութեան եթերային թրթռումներ կամ ճօճմունք յառաջ բերել, ընդունող գործիքն ալ պէտք է որ նոյն չափ ալիքներ ընդունելու համար պատրաստուած լինի, ապա թէ ոչ չի շարժիր և չի պատասխաներ ուղարկող գործիքին շարժմանց և կամ անհամաձայն կը պատասխանէ : Փորձերով այս կարեւոր իրողութիւնս հաստատուած է, որ հարկ է ուղարկող և ընդունող գործիքներն իրարու հետ համաձայնեցուին, որպէս զի կարենան հեռագիր

մ'ուղարկել և ընդունիլ : — Այս համաձայնութիւնս դժուարին բան մի չէ, հետեւաբար զիւրագործածելի միջոց մ'է պաղտնքը պահպանելու համար, առանց հարկ լինելու զաղտնի նշաններու կամ այլոքների դիմելու, քանի որ համաձայնութեան աստիճանը անսահման կերպով կրնան իրարմէ տարբերիլ :

Շարայայեղի

Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն Ա Մ Ի Ս

Թ Ո Ւ Ն Ի Ս



ՄԻԱՑԵԱՆ, ՆԱՀԱՆԳԻ ԵՒ ՍՊԱՆԻԱ

ԱՅՏԵՐԱՋՏԸ կը շարունակուի երկուց ազգաց մէջ, և բովանդակ Եւրոպա մոխրաւոր է վեր հանդիսատես կեցած է առանց հաշտութար միջնորդութեան մը անտարբեր, անհոգ և զրեթէ անզգայ քաղաքականութեամբ. զոր կ'օգտէ չէզոքութեան բառին ներքեւ քաղաքիկ :

Ամերիկայէ եկած լուրերը իրենց անէշտութեան համար Պատմութեան մէջ առանձին ժաւանակ մը պիտի կազմեն, և որ զարմանալին է, այդ շինծու լուրերը երբեքն չպատասխանեցին երեսան Սպանիայ, որով կառկած մը կը ծնանի որ ամենայնը դրամական խաղ մը ըլլայ, և թէ կարելի է ըսել, նոյն իսկ պատերազմը, որ այսօր քան արեւմտեան իշխանաց պատճառ է, զրամական խաղ մ'է :

Մանիլա քաղաքը, ըստ հեռագրաց, շատ անգամ առնուեցաւ և կամ անձնատուր եղաւ և սակայն տակաւին Սպանիացուց ձեռքն է և զուրայի ծովեղբերաց բերդերը շատոնց հիմնադատակ կործանուեցան և Սանտիագոյ աւերակի կոյտ մը դարձաւ, և սակայն Զերվերա փալուած նորա նաւահանգստին մէջ կը շուսբեցնէ Ամերիկացի վիթխարի նաւատորմի մը և կը յամեցնէ պատերազմին վախճանը, միշտ յուսով որ ծագի յանկարծ յալըղութեան կամ

պատկանաւոր հաշտութեան աստի մի: Շատ խօսուեցաւ լրացող մէջ որ Գերմանիա գնած ըլլալ զաղտ զՓիլիպպեանսն և կամ Գերմանիոյ աստիպտական կայսրը, պաշտպան պիտի կանգնի պիլի թագապահի մը տաղանապարհական վայրէկեաններուն, յորոց մէկուն մէջ մինչեւ թագապահութենէ, կ'ըսեն, հրամարդ փափագեցաւ ի նպատակ իւր իշխանանշի տալովը, բայց Ուոլինգթոնէ հեռագիրքը կը ջրեն Գերմանիոյ զօրծաւեայ զիտաւորութիւնք, և ի Զինատան զոցոյց գերմանական նաւատորմին զէպի Մանիլա ուղեորութիւնը, աննշան պատահար մը կը համարին, պարզ գերմանական հպատակքը պաշտպանելու համար: Այս յայտնի է ըստ ծանուցանելոյ Մանիլայի հրամանատարին, որ Փիլիպպեանց մայրաքաղաքը շատ ծանր և վտանգաւոր զիրքի մէջ է բայց ոչ յուսահատական: Ագուիճալտոյ ապստամբաց զուտը, արդէն շատ մը քաղաքաց տիրած է, նաեւ Լուցոն կ'ըզոյն մէջ, ուր հաստատած է վարչական ձեւ մը, ազատ հաղորդակցութիւն ունենալով ամէն կողմ: Մին Փիլիպպեանց ընդհանուր հրամանատարը՝ գնդապետ Ասկուստի Մանիլայի որմոց մէջ փակուած է զուրկ ի կարեւորաց, չուենալով որ և է հաղորդակցութիւն: Մանիլայի մօտ կը գտնուի նաեւ ծովակալն Տիգուիլ, իրեն արդիւնքու ապստամբաց, որ ծայրայեղ վայրենութիւնք չ'ընեն: Մանիլայի բազմաթիւ եւրոպացի ընտանիք, Վալիէն ապահոված են և հոն կ'ապրին Ամերիկայի ծովակալին պաշտպանութեան ներքեւ: Մանիլա շատոյն ի զուր կը սպանն օգնութեան մը ի Սպանիոյ: Յետ երկար հակառակընդդէմ ըստերես, վերջապէս Սպանիացի պահեստի նաւատորմիդը մեկնեցաւ Սուէզի գոտիով, ընդ հրամանատարութեամբ Նամարայ ծովակալին: Պաշտօնարանին այսքան դանդաղելը մինչեւ կապած մը կու տայ որ Ասկուստի տիրութեան դարձրք ի Մանիլայէ, զիտաւորութեամբ մը թերեւս յուսառական կը ներկայացնեն Փիլիպպեանց կացութիւնը, յայտ առաւել քան իրականութիւնը: Զարմանալի ժամանակ, հարկ է միշտ հեռագրեալ լրոց հակառակը հաւատալ:

Յայտնի է միայն այս՝ որ Սպանիոյ ներքին ոյժը որ յաւուր կը տկարանայ. պատերազմի պատճառաւ քառասներեւ շատերուն մէջ դադրած է վաճառականութիւնը, փակուած են գործարանք և տնիքը գործաւորք ունայնաձեւն կը պարտեն: Պաշտօնարանը չուենի արգելք եղած զօրութիւն մը՝ զի զանազան պետիքներուն մէջ կուսակցութեանց զլիաւորք, ինչպէս նաեւ հաս-

տարկապետականք և Կարլոսեանք կատկածոս զիրք մը բռնած են, նոյն իսկ եղեւմտից քաշարկութեան համար:

Ի Միացեալ Նահանգ թուէարկուեցաւ 2 միլիարտից վարկ մը և կը շարունակեն զինուորագրութիւնը: Եւ որովհետեւ ցարդ Սանտիագոյի ղեմ ըրած ամէն փորձ յաջող ելք մը չուեցաւ, նոր կեդրոնացումն սկսած է ոյժերու՝ վերջնական փորձի մը համար. զի կ'ըսուի որ բանակին մէջ Սպանիացեաց առաջներէն աւելի ծանաւատենքը սկսեր է կոտորել, և բանակին մէջ կը պակսի օրինաւոր սպասարկութիւն և կանոնաւոր կազմակերպութիւն, և ինչպէս կարելի է այդօրինակ հաւաքեալ զինուորաց մէջ, յորոց ապահով մեծամասնութիւնը աւելի արծաթափութեամբ զիմած է քան հայրենափութեամբ: Կան եւս նահանգը, օրօնք արդէն ձայներէն կը բարձրացնեն հաշտութեան մը համար որ զետ հեռու կ'երեւայ: Ամենայն պարագայք կը բռնադատեն զվարչութիւնը զորաւոր յարձակման մը և փնջանելու Զերվերայի « փայտեայ պարիսպները » Մովակալն Սեմուէլ արդէն սկսած է պատրաստութիւն թէ ծովէ և թէ ցամաքէն Շաֆտըր հաւաքարպետը՝ Յունիս 22ին կցեալ ամերիկացի զունդեր ցամաք հանել Սանտիագոյէ քանի մը քերվեմտը հեռու, և հոն հաւաքել 20,000 զինուոր որոց պիտի օգնեն կալիֆոռնի և Կարլիսա ապստամբաց զուտք 3000 հսգով: Յունիս 22ին ամերիկացի զունդերը յարձակեցան Եստրալկոնայի ձորին վրայ, ուր կը գտնուէին 2000 սպանիացիք: Բայց բռնադատուեցան նահանջելու: Արդէն զփուարին է չուել Կուանդանաձոյի Սանտա Կատալինայի վրայ, որովհետեւ լինաւ իւր և լուկէ զօրավարք 8000 զօրք ճամբան բռնած են, Ամերիկացիք թէպէտ ցամաք ելած են, բայց շատ քիւտարին պիտի ըլլայ յառաջելը՝ երկրին լեռնային զրից պատճառաւ: Եւ աւելայն չէ կարելի որ յուսահատին զի պէտք է խորտակել կամ գերել Զերվերայի հաւատարմիդը և տիրել Սանտիագոյի որ առանց մեծ ամբողջութեանց Հաւանայի, կ'ըզոյն կարեւորագոյն ամրոցը և պաշտպանութիւնը զարձակելու Երեսուցի մը:

ԱՆ Գ Լ Ի Ա

ՅԱնգլիա մեքենազործաց գործադուլին յաւըրդեց այժմ Կարդիֆի անծխահանաց գործարգունը, զոր աշխարհ ամենայն սկսաւ զգալ ածխահանքին սուղնալովը: Գործաւորք կը պա-

հանձնեն 10 0/0 յաւելումն վճարքներու վրայ, մինչև ցղեկանքներ և զոր կը մերժեն հանձնառէրք: Գործադուրը ամէն օր աւելի եւս կ'ընդարձակուի մօտ գաւառներ, և մինչդեռ այդ հանձնքներուն օրական տուած արդիւնքն էր 250,000 տոնաւ չափ, այժմ հազիւ կուտան 3000. և չարաթափան ֆէստը կը համարուի մօտ ութ և կէս միլիոն:

Բրիտանական վարչութիւնը զբաղեալ է աւելի արտաքին խնդրովք, յորտ վերջին ժամանակներու մէջ ունեցաւ իւր յաջողութիւնքը, և իւրջ Սուլթանի պաշտօնարանը Արտաքին քաղաքականութեան պալատներուն մէջ ի թօտարանի, 128 քուէնէջ օրաւաւելութեամբ ներքին յարթմանակ մը ունեցաւ Յունիս ի ին:

Անգլիա բաց ի նախկին ստացած մասէն ի Զինաստան, ունեցաւ զարձակ 99 տարուան համար ուրիշ երկրի կտոր մը Քանուսի թերակղզւոյն մէջ, զէմ յանդիման Հոնկ-Քոնկի:

ԱՆԳԼԻԱ-ԵՐԿՐԴՏԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Անգլիա-եղբայրական բանակը կը պատրաստուի յառաջելու ի Խարթում և Թերեւս մինչև ի Ալգիւսէն նեղոս: Քիչնրը սպարապետը արդէն Յունիս Զինք մեկնեցաւ զէպ ի բանակ: Ներպայիս Տերութիւնքն աւելի Անգլիոյ մօտաւանջութեան նիւթ մ'է Եթովպիոյ Մագոնէնէն իշխանին 30,000 զօրք ներդրուի մօտ Գաշտատ հասնելի, ուր կը կարծուի թէ միտնայ զաւրիացի Մարշանի հետ: Անգլիա կը համարի որ պէտք չէ յամել, և անգլիացի պաշտօնեայն Հիքս Բիչ, յետ իմացնելու Ստորին Խորհրդարանին մէջ, Յունիս Զին Խարթումի արշաւանքը, առաջարկեց որ Անգլիա յետո չ'ընդունի 700,000 լիւրս տոբրէն վարկը, զոր մատուցեր էր Եթովպոսի յամին 1897, Սուլթանի արշաւանաց օկիւրը: Բնական է որ ամենայն ոք հարցնէ, թէ առ ինչ այս առատաձեռնութիւնը...

Եթովպական վարչութիւնը, յետ ժախելու անգլիական ընկերութեան մը իւր Խոտիլիէն նաւարկութեան շօգնականները, իբրեւ պատերազմի դրամ հոգալու համար, այժմ կը բանակցի զարձակ Անգլիոյ հետ, ամենապակաս Սուլթանի երկաթուղիները: Կ'ըսուի որ Բ. Դուռը, իբր զերպոյն վարիչ Եթովպոսի, բողբոսմ ըլլայ այս վաճառման զէմ որ Եթովպոսի ազգագրական հարկն որով և կենսական ջրերութեան տէր կ'ընէ օտար պետութիւն մը, և այս բողբոսմ վրայ սակարկութիւնը յետաձգուած է:

ԱՒՍՅՐԻԱ

Աստորիոյ վարչութիւնը միշտ անել վիճակի մէջ է, չկարենալով աղքատութեան պահանջներուն համաձայնութեան կէտ մը գտնել: Շէօն երեքի կուսակցութիւնը ծանոյց որ ընտա խափանդութենէ պիտի չզգարի մինչև որ լեզուաց վերաբերեալ հրամանքը ետ չ'առնուին: Կոմսն Թուն ամէն միջոց փորձեց մեծամասնութիւն մը կազմելու համար, և չկարենալով յաջողիլ և Յովսէփ Կայսրն եւս չ'առնելով յոյս՝ որ ուրիշ մը յաջողի, Յունիս 13ի կայսերական հրամանով մը յետաձգեց խորհրդաբանի ղուժարումները:

Եւ սակայն կայ կէտ մը յորում կայսրուութեան բովանդակ ժողովրդը մէջ կը զարթոյն ամենայն բուռն տարանայնութիւնք. և այս կը տեսնուի՝ երբ հարկ ըլլայ Փրանկիսկոն Յովսէփ Կայսր համարման և Եթով շոր ցոյց մը առ: Յունիս Զին Վենեսայի զպրոցաց 70,000 աշակերտք և աշակերտուհիք կայսրը դիմանէ թափօրով անցնի ցնտութեամբ, և ինքը ըստ զհոսթեամբ քաղաքալիսոյն՝ որ այն տեսարանը իրեն « շատ մը ցաւեր մուգնել կուտար »: Յունիս Զին կայսրութեան բովանդակ Որտորաց Նուերականութիւն մը դնաց ի Շէօնքերին, յորտ կար նաեւ Կըմբըրլանդի ղուքը և արշիդուքն Փրանկիսկոն Թերտիանան՝ մատուցանելու կայսեր իւր յարգանքը: Արշիդուքը ամենուն կողմանէ ոսկեայ հիւր մը նուիրեց:

Այսպիսի հանդիման և հպատակութեանց ծաւալմանակ ալ չպակեցան յազմանց լուրեր եւս, և այս անգամ ի Կալիքիս ուր հակահրէպք շատ մը շփոթեցր յարաբերի: Մեծ շառաչ ունեցաւ նաեւ ի Պրագա Թրանց Պալատք պահմ հոգաւ կանոն պատմաբանի հարկերաւեի աւթիւ, համալաւականաց ոգին ընդդէմ համադրման կանաց: Իրեւ Ձիլեք համալաւա լրագրի տեսուչը՝ զօրավար Փոմարոֆ, յայտնի ճառարտութիւն մը ըրաւ ընդդէմ գերմանացւոց: Աստորիս և Հունգարիոյ տպագրութիւնը բողբոսեց և Պրագայի օտարականութիւնը ծանոյց Փոմարոֆի որ թիկ կը փափագի մնալ քանի մը օր ի Պրագա հարկ է, որ փոխէ իւր խօսակցութեան ոգը: Եւ սակայն իննեւաններորդ դարուն վերջաւանում ժամանակ, քաղաքական մեծադոյն երեւոյթիներն պիտի ըլլան համադրականութիւն և համադրմանականութիւնը, զի լատին աղբերը շարունակաբար կը դիմեն ի խնարհուած:

Գ Ա Լ Լ Ի Ա

Նոր Խոսարանը բացուեցաւ Յունիս ինն: Եւ թէպէտ նախադահի ընտրութեան մէջ պաշտօնարանին թիկնածուն Գեշանէլ, ունեցաւ 282 զուէ ընդդէմ 278 զուէից, սակայն Բրիտանի, սակայն այդ ընտրութեան դէմ եղած աղմուկներէն յայտնի տեսնուեցաւ որ պաշտօնարանին անկումը մօտ էր: Յունիս 13ին սկսան վիճարանութիւնը վարչութեան քաղաքականութեան վրայ և Միլլըրան ընկերավարական երեսփոխանը ամբաստանեց զՄիլլըրն՝ որ թողլով կազմակերպուելու կաթոլիկ կուսակցութիւն մը, և յենլով ստէպ Ալաիդոմեանց վրայ, մասնեւ երբ զուսակապետութիւնը, ծանուցանեց իմանալով որ իւր կուսակցութիւնը միայն Ձախակողման պաշտօնարանի մը վրայ կրնար վստահութիւն ունենալ: Միլլըրն պատասխանեց որ ինքը չէր մերժող օգնութիւն մը սր և է կողմանէ: ցըցուց ընկերավարաց հասարակը ընտրութեանց ժամանակ, հացի սղութիւնը պարտուակ առնելով, մինչ վարչութիւնը ցորենի վրայի տուրքը վերանցեր էր և հոշակեց որ աշխարհի էր համաձայնութիւն մը ընկերավարաց հետ: Եթէ այսպէս «անպատեւ դառնայ Խոսարանական վարչութիւնը, այն ստեն երկիրը պիտի ստիպուի ցատքի լալը ունենալու վարչութիւն մը որ զինքը փրկէ խոսարանական անշխանութենէն: Բուրժուա Յետին ձախակողմանց պետը՝ պատասխանելով զօրեց « որ ընկերավարաց յաղթութիւնը խափանելու համար, հարկ էր ջնջել կաթոլիկաց հետ զիստակար միութիւնը: Եւ Յունիս 14ին սկսան օրակարգներուն քուէարկութիւնը: Ռիւրայ ներկայացուցած էր օրակարգ մը որ « Խոսարանը վարչութեան բացառութեանց հաստնելով և վճելով որ հասարակապետականաց միութեան վրայ հաստատեալ աւսման պետական բարեկարգութեանց քաղաքականութիւնը յառաջ վարէ, կ'անցնի... »: Այս օրակարգը ունեցաւ 23 մեծամասնութիւն: Այն ստեն արւարականը կ'առաջարկեն որ աւելցան վրայ « վարչութիւնը պէտք է յենու միայն հասարակապետական մեծամասնութեան մը վրայ: Այս յաւելումը կը մերժէ Միլլըրն, սահմանադրութեան հակառակ համարելով, և սակայն Խոսարանը զայն կ'ընդունի 298 զուէից ընդդէմ 246 զուէից: Ձախակողմանց սոք կ'ելլեն և ահաւոր շարաշներով կը զօշեն « Հրաժարու-

կան »: Ապա օրակարգին ամբողջական քուէարկութեան միջոց Պաշտօնարանը ունեցաւ 284 զուէ ընդդէմ 272 զուէից: Այն է 12 զուէից մեծամասնութիւն:

Երկրորդ օրը Միլլըրն հրաժարականը տուաւ և մերժեց յառաջարկեալուն նոր պաշտօնարան մը կազմելու: Հասարակապետութեան նախադահը կ'օրեց նախ զՌիւրայ, ապա զՍարրիէն և ապա զՊեյարալ նոր պաշտօնարան մը կազմելու, հիմնեալ հասարակապետական կուսակցութեանց միութեան վրայ: Սակայն երեքն ալ չյաջողեցան: Յունիս 29ին յանձնուեցաւ Բրիտանի, նախորդ նախադահի Խոսարանին, որ Միլլըրն անկման մէջ աղքատեցիկ դեր մը ունեցեր էր: Բրիտանի աւելի յաջող գտնուեցաւ: Բայց մինչ ինքը ծայրագոյն ձախակողման էր, հասանեցաւ իւր ծրագրին մէջ մացնելու Միլլըրն կամ յառաջարկեալանաց ծրագրերէն զմանն: Բրիտանի պաշտօնարանին մէջ մտան իսպանական՝ պատերազմի, Պեյարալ՝ ելեւմտից, Լէոն Բուրժուա հասարակաց կրթութեան, Լուքսըմա Ժովային զորութեան և ուրիշ նշանաւոր երեսփոխանք: Բայց առաջին նիստէն երկար կեանք մը չգտնուեալ, զանի որ բուն մեծամասնութեան մը արդիւնք է:

Զուլայի բողոքը մերժուելով վճռալին լստեանէն, զատը կրկին պիտի սկսուի Վերսայլ:

Գ Ե Բ Մ Ա Ն Ի Ա

Խորհրդարանական ընտրութիւնը այնքան յաջող չ'եղան վարչութեան, ինչպէս կը փափաքուէր: Ընդհակառակն ընկերավարաց համամատաւար աւելի զօրացան: Բայց և մեծ տարբերութիւն մը չկայ տուի Խոսարանէն: Վարչութիւնը կ'որոշուց 8 միայն զուէ:

Յունիս 6ին բովանդակ Գերմանիա լուսավարականութեան ասոնց Գուլիէլմոս Բի կայսրութեան տառերորդ արարողաբար: Կայսրը Պահպանաց զնդին խօսելու ժամանակ հուշակեց որ բանակը իւր պապէն և իւր հորմէն ստացած մեծադոյն ժառանգութիւնը կը համարէր: ԱՄեծ մոստանութեան մէջ թաղը զուլուս դրի: Ամենաբեք կը տարակուսէին վրաս, ամէն կողմ ուսուցատուութիւններ կ'ըլլային: Մէկ մը միայն իմ վրաս վստահացաւ, և այն էր բանակը: Անոր վրայ յենեալ սկսաւ ծանր պաշտօն, լաւ բարեկեցիկ որ բանակն է հարկեմաց զխաւսօր զօրութիւնը և Պրուսիոյ քահանա մեծադոյն նեցուկը: Եւ Պատմական ճշմարտութեան համար պէտք

է անկցնենք որ այս վերջին տասն տարինորո-
մէջ գերմանական ոգին, գերմանական ապրանք
մեծ տարածումն ստացան աշխարհիս մայն կողմ-
Ներթալանէն աւելի, բարոյական աշխարհա-
կալութեան հետամուտ եղաւ Գոլլիէլմոս Բ.,
յորուժ յաջողեցաւ կատարելագոյն նոյն իսկ
իւր դերիմէ հակառակորդաց մերթ ընդ մերթ
համակրութիւն ներշնչելով իւր անպետական
բարբոթ:

Փ Ո Ւ Ր Ք Ի Ա

Թեոսլիոյ Թուրք զորքը՝ կանոնաւորապէս
Յունիս 6ին քաղաքացաւ: Դարձող զինուորք
ամէն կողմ յաղթական ընդունելութիւններ
գտան: Կը համարուէր որ սպարապետ Խըհէմ
փաշայի եւս յատուկ շքեղ ընդունելութիւն մը
ըլլայ ի Կ. Պոլիս, մանաւանդ որ հռչակուած
էր մարտանաւի մը Սելանիկ երթուլը զինքը ըն-
դունելու համար: Սակայն Խըհէմ փաշա առա-
ւատ մը կանուխ յանկարծ կը հասնէր երկա-
թուղով իւր սպայակուտին հետ և անմիջապէս
կը տարուէր ի կայսերական պալատ, ուր կը
հաւատարէր միւս զորավարաց: Սուլտանը նոյն
օրը կը զրկէր աշտամանգաղարդ Իթիիխար նշա-
նը:

Յունական զրամոյն վճարուելով, սկսան ար-
տաքէն պահանջը: Թուսիոյ վարչութիւնը վեր-
ջապէս յաջողեցաւ առ ժամա 500,000 ոսկի
ընդունել պատերազմի սուղանքէն: Գալլիա կը
պահանջէ 1,030,000 ֆր. և Իտալիա 400,000
կոտորածներու ժամանակ, իրենց հպատակաց
ֆետտներուն փոխարէն: Յայտնի է Անգլիա եւս
բան մը պիտի պահանջէ:

Հազիւ Թեոսլիայէն դորգերը կ'ելլէին. Բ.,
Դուռը նորէն չըլտեբերակունով մը պահանջեց
մեծ Պետութիւններէն որ կարգի մը քննէ Կրե-
տէի խնդիրը, առաւանին օսմանեան հպատակ
վարձէ մը: Սակայն կողոյշ մէջ մանկայն ինչ
իւր նախկին վիճակին մէջ է և քալլ մը չէ յա-
ռաջացած դէպ ի լուծումն. նա մանաւանդ Թե-
րուս քիւ մը աւելի կ'նշուած է խնդիրը: Ձի
Թուսիոս, Գալլիա, Անգլիա և Իտալիա ըմբռնած
ին որ ներկայապէս հարկ է մեկտի Թուղւլ իշ-
խան Գեորգիոսի թեկնածութիւնը. և ի Կ. Պոլիս
իրենց զեռպանաց ձեռքով ծրագիր մը կ'ազն
չինել, ըստ որում զօրծաղիր Թեոսլիոսի թաւ
զուլիս պիտի ըլլան ի կրեւե գտնուած ծովա-
կալը: Միւս կողմանէ Կրետէի Ազգային ժա-
ղովքը կը բողբէ յայտնապէս որ յանձն չ'առ-
նուր որ և է Գործաղիր վարչութիւն մը, որուն

նպատակը պատրաստութիւն մը չ'ըլլայ Գեոր-
գիոս իշխանին գալուտեան: Ներկայ քաղաքա-
պետութիւնը, որքան սկսար և անհար եղաւ
գործերն յարմարելու, բաղդատմաբ ուրիշ ժա-
մանակաց, յորս միշտ զիւրին էր համաձայնու-
թեան մը գալ, նոյն իսկ յարգելով ամէն շահ:
Կ. Պոլսոյ անդլիական դեսպան՝ Սիր Ֆրիլիպ
Կլորթի, կը փոխադրուի նոյն պաշտօնով ի Հոմով
և նորա առջ ի Կ. Պոլիս կ'անուանուի Սիր
Նիկոլա Օ՝ Կոննոր, որ դեսպան էր ի Պետեր-
բուրգ:

Եւմէնի մէջ ապստամբութիւնը միշտ կը չա-
րունակէ: Բ. Դուռը 8000 զինուոր զրկեց, և
հրամանատար անուանեց զԱպտուլլահ փաշա,
փոխան Ֆէյզի փաշայի. բայց շատ զիւրին չ'ե-
րեւար ի սպաս ընկնելու ապստամբութիւնը որ
նիւթական ամբողջութիւններէ աւելի ունի կրօ-
նական տեսակէտով զրգոռներ, որոց փոփա-
գելի է խալիֆայական մէջ բաժանումն զինչ:

Յուսկումը կը շարունակուի դարձեալ Մոնտե-
նեգրոյի սահմանաց վրայ ընդ քրիստոնեայ և
ընդ մահմետական ալլանդիոս: Յետքեւոս այ-
րոր էին երեք քրիստոնեայ զեւղեր և վանիւր
էին բնակիրքը Մոնտենեգրոյ սահմաններէն աւ-
ղին, սպաննելով նաեւ աղայք և կանայք: Մեռ-
տենեգրոյի վարչութիւնը, որ վերջին տարիներ
ըռւս մէջ թրթուրն առնով կը չորէն այս յու-
ղումները, և որ օր յաւուր ազդեցիկ դեր մը
կը սկսի ստանալ թէ բախանեան և թէ համա-
սլաական խնդրոց մէջ, յայտնի է պաշտա-
նուելով հզօր թիկունքէ մը, բողբեց առ Բ.
Դուռը քրիստոնեայ ալլանդիոսը կրած նե-
ղութեանց համար: Բ. Դուռը հրամայեց որ Դիւս-
կովայէն դունդեր երթան մահմետականքը զսպե-
լու: Բայց այն ատեն քրիստոնեայ ալլանդիա-
ցիք ելան ընդդէմ բանակին, կռիւ մը ծագեցաւ
և երեք զինուորք ընկան կռուոյն մէջ: Այսու
հանգերմ բանակը շարունակեց հանդարտեցնե-
լու ոգիները, և սուլտանը պատուիրեց որ քրիս-
տոնէից այրուած տունները շինուին: Առ ժամ
տիրեց խաղաղութիւնը, որուն պատճառաւ
Մոնտենեգրոյի իշխանը յայտնեց իւր շնորհա-
կութիւնքը առ Բ. Դուռը:

Թուսիոյ վարչութիւնը հրամայած էր որ Հա-
յատտանի շարգերու ժամանակ ի Կովկաս աւ-
պաւինող 60,000 հայերը, համարեն իրենց
հայրենիքը: Այժմ կը բռնադատուի Թուսիոյ
վարչութիւնը զանեղք ընդունել: Բ. Դուռն հա-
նելի չէ այս բռնադատութիւնը և ըրած է իսկ
իւր զիտողութիւնքը ի Պետերբուրգ: Սակայն
գաղթականութեանց դարձը սկսած է արտա-

կուռը թշուառութեամբ, առանց օգնութեանց
յօտարէն և յիւր ազգէն:

Ի Տ Ա Լ Ի Ա

Նոր կազմուած պաշտօնարանը, ծնած օրէն
մեռեալ համարուեցաւ: Առաջին անգամ երբ
մարքիզն Ռուզիէն ներկայացաւ խօսարարին
նոր ընկերներովը, շատ մը ծաղրածութիւնք և
արհամարհութիւնք լսեց, իմացաւ որ քուէար-
կութեան մը չեկած, հարկ էր հրաժարիլ: Ղե-
քուէարկութիւնը կրնար նպաստաւոր ըլլալ
Մանարգելեան կուսակցութեան: Թագաւորը
նախ Վիսկոնտի Վենետոյի յանձնեց պաշտօ-
նարանի մը կազմութիւնը, ապա Ֆինալի ա-
ստեանակալին, որոնք յաջողեցան Աշկողման
Պաշտօնարան մը կազմելու: Հարկ եղաւ որ
կոչէ զգօրավար Պեղուս, որ ձախակողման կու-
սակցութեան էր համարուէր:

Պեղուս յետ երկար բանակցութեան կազմեց
պաշտօնարանը, յորում մտան թէ կեդրոնի և
թէ ձախակողման երեսփոխանք: Ինքը նա-
խագահութեամբ հանդերձ, կ'ըլլար պաշտօ-
նեայ Ներքին գործոց, Յետ Միլանո և ուրիշ
քաղաքաց յեղափոխութեանց, իտալիոյ լուրջ
տարրը: Երբով կը փափագէր որ Ներքին գոր-
ծոց ուղղութիւնը յանձնուի զօրաւոր ձեռքի մը,
որ ի հարկին չտարան: Արտաքին գործոց
պաշտօնեայ անուանուեցաւ Ժովակալն Կանե-
վարոյ՝ այն որ նախագահ էր ի Կրեմէ համազ-
գային նաւատորմի, և Հասարակաց կրթու-
թեան դռնախ անցաւ նշանաւոր բժիշկն Բաշելլի:
Երբեմն պաշտօնեայ Կրիսպիտի հետ: Ի Միլան
շարունակեցին յեղափոխական համարուողաց
դատերը: Ամենէն աւելի հետաքրքրականք ե-
ղան լրագրապետաց հարցաքննութիւնը և վճիռ-
քը: Փաստաբանն Ռոմուսոսի՝ տեսուչ Սենկոյոյ
լրագրին, քառասպարտուեցաւ Յ տարուան բան-
տի և մէկ տարուան հակողութեան: Դոն Ալբեր-
տարիոյ քահանայն խմբագրապետ Օստրիվատո-
րէ կատարելիոյ լրագրին՝ երեք տարուան բան-
տի և 1000 Քրանք տուգանքի: Յայտնի է ա-
մենն ալ բողոքեցին վճակին շտեմնի: Ի Մի-
լան կը շարունակուի պաշարման վիճակը:

Իտալիոյ խօսարանը Յունիս Զինն գումա-
րուելով որոշեց որ Յունիս 1ին ցորեմին վրայէ
վերցուած տուրքը նորոգութի 8% առ կուրն-
տալ և Յունիս 15ին 7 1/2 առ կուրնտալ:

Յ Ո Ւ Ն Ա Ս Յ Ա Ն

Յունական վարչութիւնը զբաղեցաւ զթեա-
լիս կենդանացնելու, որ պատերազմի հետե-
ւանքներուն պատճառաւ ահաւոր վիճակի մէջ
կը գտնուի: Բայց ամէն նահանգ հաւատարա-
պէս ֆլաթուած չէ, կան տեղեր յորս թուրք
հրամանատարք իրենց արթնութեամբ և կար-
գապահութեամբ կրցան աղտոտել երկիրը ամէն
աւերմունքներէ: Այս բաղդաւոր տեղերէն մին
եղաւ Տրիխալա: Գալլիական տեղեակ լրագրի
մը Աթէնքէն կը գրէին նամակ մը՝ զոր պատմական
անկողմնաորութեան համար հարկ է յիշել:
« Թուրք զբաւման ժամանակի Տրիխալայն կու-
սակալը՝ Հաքքի փաշա, քաջ ծերուկ մը, միշտ
բարեռէր զանուեցաւ առ ընակիչս, առանց
խտրութեան կրօնի: Օրինակելի մատակարա-
րութիւն մը օւնեցաւ նա. և Աթէնքի լրա-
գրիք շատ անգամ գովաբանով յիշեցին Հաքքի
փաշայն անունը: Երբ թուրք բանակը պիտի
քաշուէր Տրիխալայն, քրիստոնեայ ընակիչք
ուղեցին յայտնել ծեր զօրավարին իրենց երախ-
տագիտութիւնը, իւր հայրական վարչութեան
համար: Առումն խուռն բաղմութեամբ ընկերե-
ցին իրեն մինչեւ երկաթուղւոյ կայարանը, ուր
Հաքքի փաշա յուզեալ և սիրաբ լցուած ձայնով
ըսաւ հետեւեալ խօսքերը: « Բարեկամք, բոլոր
սրտանց շնորհակալ եմ այն ջանքց համար զոր
իմ ձեռ մէջը բանակելուս, և հիմա մեծնելուս
ժամանակն իսկ կը ցուցընէք: Կերպնում զի-
նուորական պատուոյս վրայ, որ բոլոր կենացս
մէջ զմեզ պիտի յմահնամ: Սիրտս ելած ըլլա-
լով, աւելի բան մը չեմ կրնար ըսել: Կը մաղ-
թեմ Ձեր զաւակաց երկար և երկանիկ կենեք:
Հիմա գրեմք միաբան « Կեցցէ՛ թուրք բանա-
կը: Կեցցէ՛ յայն բանակը »:

Կ'ըսուի որ ըստ խնդրանաց Բ. Դրան, յոյն
վարչութիւնը հաւանած է որ չիբիմ մը կանգ-
նուի ի Դոմոկոս, առկտանի ծախիւք, ի յիշա-
տակ թուրք մեռեալ զօրաց:

Ս Ե Ր Բ Ի Ա

Որչափ որ Արմատականաց դուռը՝ Նիկիս
Պաշիւ, անպարտ արձկու էր Ա. Կատարանէն.
սակայն վճակելն առեալք զինքը ինն ամիս
բանտի դատապարտեց իւր յանցաւոր ընդդէմ
վճախաւորութեան Միլան Թագաւորահօր:

Սերբիոյ խօսարանի ընտրութիւնք կատարուե-

ցան պաշտօնական ազդեցութեան ներքեւ։ Մի-
լան թագաւորահայրը, իբրեւ ընդհանուր սպա-
րապետ բանակին, ամէն ահաբեկիչ հնարք բա-
նեցուցեր էր իւր հակառակորդաց ընտրութիւնը
խափանելու համար։ Ընտրութեան օրը բանակը
պատրաստ էր յոռին։ Այս հնչման ներքեւ մի
միայն արմատական մը ընտրուեցաւ։ 112 պաշ-
տօնարանականը, 62 յառապադիմականը և 19
անգոյն։ Արմատականը հրատարակած էին որ
« Պաշտօնարանին բռնութեանց պատճառաւ կը
բողոքէին առ Երկիրը, և կը հրաժարէին մաս-
նակցելու ընտրութեանց »։ Սերբիա յարածուփ
վիճակի մը մէջ կը գտնուէր, շատ հեռի Սլո-
վիցայի պարտութեան վրէժը անկելու կարո-
ղութենէն, ինչպէս կ'երգէր միշտ Միլան։

Խօսարանը բացուեցաւ Յուլիոս 29ին։

Մ-Ն

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԻՑ



ԱՐԱՐԱՍ (մայիս), վաղարշապատ։

Քաղաւածքի կոնդակաց Վեհ Հայրապետի։ —
Քաղաւածք Սիւնդի Օրարութիւններէց։ —
Մի կալ հակառակ շարին։ — « Պատարագ »,
բառին ծագումը — Մ. ԱՐԱՐԱՍ, — Միսա-
կան խնդիրների վերաբերեալ մի քանի հար-
ցեր։ — Սաւոնարիւս — Ս. Կ.։ — Օրթոդոքս
և Բողոքական եկեղեցիներ։ — Առտուածա-
բաններ պէտք են — Գ. Կ.։ — Մայր արքայ։ —
Տփլիսի թեմ։ — Տաճկահայր։ — Թե-
րուսուսթիւն — Ս. Մ.։ — Այլ և այլր։ —
Գրախօսութիւն — Մ. ՎԱՐԳ.։ — Ստա-
ցուած զրքեր։ — Յանդիսած՝ Նոր Շարա-
կաներ — Ս. Վ.։ — Բովանդակութիւնը
ազգ. հանդիսէց։

ԱՐ. ՄԱՄՈՒԼ (1 յունիս), Զմիւռնիւս։

Ժամանակակից գիտութեան դէմ (շար.)։ —
Գաղտնիխոյզ Նորինց (շար. և վերջ) — Գրե-
ղոր Գ. ՅԱՅԱՅԵԱՆ։ — Վարդգիսուհի (շար.) —
ԱՐԱՐԱՍ։ — Դուրեան — Ա. ՆԱԽԱՐԱՆ։ —
Ինֆրէնցա (շար.) — ՍՏԵՓԱՆ ՄԱԿԱՐԱՆ։

— Պ. Կլատորն։ — Այդեկութիւն միջոցին
— Ա. ՆԱԽԱՐԱՆ։ — Խաչը — Թրգմ. Թ. ՆԱԽ-
ՅԵԱՆ։ — Իմ յուշագրերս — Մ. Մ.։ —
Լրաբեր։

ԼՈՅՍ ՀԱՆԴԵՍ (16 մայիս), Կ. Պոլիս։

Բոցերուն առջեւ — ԽԱՐ.։ — Բարոյական և
Փիլոսոփայութիւն, — Երեւոտարդի հոգի
(շար.) — ՓԻԼՈ ՔԱՐՈ։ — Պահ մը Գիւղի
մարդերուն հետ (շար.) — ԹԱՏԱՅԵԱՆ։ —
Կրթական հարցեր. — Համայնագիտակի մը
պէտքը մեր մէջ — ՊԼՈՒՅ. — Յիշատակաց
Աշխարհէն, — Քանի մը օր կ'եղեւիւկ —
Ս. ՓԱՍՏԱՅԵԱՆ։ — Լեզուաբանական, —
Թուրքերէնի հին և նորի ուղղագրութիւնը
— Ն. ՔՈՐՈՍԵԱՆ։ — Գահարներ, Խարբերի
ծողովական երգերէն — ԱՏԻԼ-ՈՐՈՅԱՆԻՈՒ։ —
Օտար էջեր, — Bercarolle — Ա. ՊԵՐԼԻՆ։ —
Սրտի էջեր, — Հայահիւս — Մ. Ռ.։ —
Գիտական աշխարհէն (Քրոնիկ) — Ս. Ռ.։
ԶԵՄԼԻԿԱՅԵԱՆ։ — Գրական փառքեր, —
Հայերի հիմն իրարեւ — ՍԵՍԱԿ.։ — Մոռ-
ցուած էջեր, — Գ. ՊԵՂԵՍԵՐԵԱՆ — ԽՈՍԼ-
ՐՈՎ ՊԵՂԵՍԵԱՆ։ — Գիտողի դատաւանդ, —
Հակառակի բարբեր (շար.) — ՎԱՐԳ ՄՍՏ-
ՂՈՒՆԻ։ — Ազգային լուսեր. — Լոյսի պա-
տախաները. — Ազգ։

ՀԱՆԴԵՍ ՄԱՍ. (6 յունիս), Վիեննա։

Քանի մի խօսք սաղիմական հայ հնադրու-
թեանց մասին — ՌՈՒՐԻՆ ՍԱՐԳ. ՍԱՐՈՒԼԵԱՆ։ —
Անկարկ մը հայ հնադրութեան վրայ
(շար. և վերջ) — Հ. Յ. Տ.։ — Փառառոս
Բիւզանդացի և իւր պատմութեան խորա-
խոյզ (շար.) — Յ. ԳԱՐԵՍԵԱՆ։ — Եւրոպիոյ
Հայոց զաւառարարագող (շար.) — ՅԱՎՀ.
ԳԱՅԱՆՅԵԱՆ։ — Եւսեբիոյ եկեղ. պատմու-
թեան առթիւ բնագիրը՝ համեմատուած հա-
յերէնի հետ — Հ. Յ. Տ.։ — Այլ և այլր՝ Նոր
հրատարակութիւնը։ — Ազգային թերթերէ
ծաղկեփռնի և Օգոսակար՝ գիտելիքներ —
Մաղկապատ։ — Քաղաքական տեսութիւն։ —
ՊՏԿԵՐ (1 յունիս), Կ. Պոլիս։

Բնականական աստղաբանութիւն (շար.)։ —
Սիմոնի և իւր պապը — ՈՐՄԻՋՂՈՒՆՅԱՆ։ —
Տոմարներն — Մ. ՎՐԱՊ. ՌԻՂՈՐԻՍԵԱՆ։ —
Քրիստոնէից պատկին աւելածանելի կապը —
Օրէնագրութիւն Օտմանեան ըստ ծիսի Անա-
թիոսյ (շար.)։